

## ԲԱԺԻՆ 8. ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

« 2011թ. մարդահամարի հարցաթերթը բնակչությանը վերաբերող անհատական հարցերից բացի, ընդգրկում էր նաև տնային տնտեսության **բնակության և բնակարանային պայմաններին** վերաբերող հարցեր:

### Մեթոդաբանական պարզաբանումներ

**Բնակելի միավոր է** համարվել մեկ տնային տնտեսության անդամների բնակության համար նախատեսված, կառուցվածքային առումով առանձին և անկախ բնակատեղը, կամ ապրելու համար չնախատեսված, բայց մարդահամարի ժամանակ որպես այդպիսին օգտագործված ցանկացած տարածք (կացարան)՝ շարժական կամ հանպատրաստից ստեղծված՝ անկախ օգտագործման ժամկետից և ունեցած հնարավորություններից:

Մարդահամարի ծրագրով տեղեկություններ են հավաքագրվել բնակելի շինության հետևյալ տեսակների վերաբերյալ.

- բնակելի տուն (առանձնատուն),
- բնակելի տան մի մաս,
- բազմաբնակարան շենքի բնակարան,
- բնակարանի մի մաս,
- տնակ/ ժամանակավոր կացարան,
- համատեղ բնակության շինություն,
- հանրակացարան,
- այլ՝ բնակության համար հարմարեցված կացատեղ:

**Անօթևան** համարվել են այն անձինք, ովքեր չեն ունեցել բնակության որոշակի կացատեղ, իրենց ոչ մեծ ունեցվածքը կրել են իրենց հետ և գիշերել են պատահական վայրերում (փողոցներ, մուտքեր, այգիներ, կիսաքանդ և լքված շինություններ և այլն):

Տվյալներ են հավաքագրվել նաև տնային տնտեսության **բնակելի միավորների՝** սեփականության ձևի, բնակելի շինության տեսակի, շահագործման հանձնելու տարեթվի, արտաքին պատերի շինանյութի, տնային տնտեսության զբաղեցրած սենյակների քանակի և բնակելի միավորի ընդհանուր մակերեսի վերաբերյալ:

**Բնակելի շինության բարեկարգվածության** այս կամ այն տեսակով ապահովվածությանը վերաբերող հարցերը հետևյալն են.

- հիմնական հեռախոսի առկայությունը,
- համակարգչի առկայությունը,
- համակարգչի առկայության դեպքում ինտերնետին միացված լինելը,
- ջեռուցման հիմնական միջոցը,
- ջրամատակարարման հիմնական աղբյուրը,
- ջրհեռացման (կոյուղացման) համակարգը,
- լոգասենյակի կամ ցնցուղի առկայությունը,
- զուգարանի առկայությունն ու տեսակը,
- աղբահանության ձևը:

